ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի << Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> (22 -դասաժամ) և <<Տեխնոլոգիա>> (3 -դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. *Ինքնակենսագրություն (Ձև 5)*
6. *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ*
7. *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ*
8. *Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)*
9. *Որակավորման տարակարգ՝ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի փետրվարի 9-ից մինչև փետվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. փետրվարի 29-ին՝ ժամը 11^{00}-ին, Կոտայքի մարզի Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, շենք 33 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 63-26-62 հեռախոսահամարով: